ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Տաթևիկ Զավենի Կարապետյանի «Ընտանեկան խնամքից զրկված երեխաների սոցիալական կապիտալի սոցիոլոգիական վերլուծություն» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ժամանակակից աշխարհում երեխաների՝ ընտանեկան խնամքից զրկվածության խնդիրը շարունակում է մնալ սոցիալական քաղաքականության և երեխաների պաշտպանության կարևորագույն մարտահրավերներից մեկը: Միջազգային մակարդակում շարունակվում են ապաինստիտուցիոնալացման գործընթացները, որոնք միտված են յուրաքանչյուր երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովմանը, իսկ Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին իրականացվող բարեփոխումները ևս պայմանավորում են թեմայի արդիականությունը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ երեխաների խնամազրկության հիմնախնդիրը երկար ժամանակ ուսումնասիրվել է հիմնականում իրավական, մանկավարժական կամ հոգեբանական տեսանկյունից: Մինչդեռ երեխաների խնամազրկության հիմնախնդրի սոցիոլոգիական վերլուծությունը, խնամազրկության գործընթացի դիտարկումը որպես բազմագործոն սոցիալական երևույթի համեմատաբար քիչ է հանդիպում: Սակավաթիվ են այն ուսումնասիրությունները, որոնք խնամազրկությունը դիտարկում են որպես սոցիալական գործընթաց, վերլուծում են երեխայի համար նշանակալի սոցիալական հարաբերությունների աստիճանական թուլացման, խաթարման, քայքայման և խզման մեխանիզմները: Ատենախոսությունը լրացնում է այդ գիտական բացը՝ առաջարկելով խնամազրկության գործընթացի սոցիոլոգիական մեկնաբանություն և այն վերլուծելով սոցիալական կապիտալի տեսության շրջանակում:

Ատենախոսության նպատակն է սոցիոլոգիական տեսանկյունից վերլուծել հայաստանյան հասարակության պայմաններում երեխաների ընտանեկան խնամքից զրկման գործընթացը' բացահայտելով ընտանեկան, համայնքային և երեխայի կողմից

ձևավորվող սոցիալական կապիտալի դերը խնամազրկության ձևավորման, զարգացման և վերարտադրման մեխանիզմներում:

Աշխատանքի գիտական նորույթների և եզրակացությունների հիմնավորումը

Գիտական աշխատանքում ստացված արդյունքների հիմնավորվածությունը պայմանավորված է հեղինակի առջև դրված խնդիրների լուծմանն ուղղված հետազոտական գիտական մեթոդների ընտրությամբ. կիրառվել են որակական և քանակական մեթոդներ՝ հաջորդական համադրման սկզբունքով: Առաջին փուլում իրականացվել է որակական տվյալների հավաքագրում և վերլուծություն, որի արդյունքների հիման վրա ձևավորվել են հետագա քանակական վերլուծության հիմնական վերլուծական կատեգորիաներն ու փոփոխականները: Մանրամասն հիմնավորված է հետազոտության ընտրանքը, հավելվածում ներկայացված գործիքակազմը թույլ է տալիս եզրակացնել, որ կատարված հետազոտությունը իրականացվել է գիտական ընթացակարգերին համապատասխան:

Աշխատանքի ուժեղ կողմերից է երեխաների խնամքի, խնամազրկության, սոցիալական կապիտալի վերաբերյալ տեսական մեկնաբանություններին խորքային անդրադարձը, հետազոտական արդյունքների սինթեզը և վերլուծական տրամաբանությունը, ինչը հնարավորություն է տվել հեղինակին հասնել առաջադրված խնդիրներին:

Հեղինակը ուսումնասիրել է մանկության սոցիոլոգիայի դասական և ժամանակակից հեղինակներին՝ Ա. Ջեյմս, Ա. Պրաութ, Ք. Ջենքս, Ու. Կորսարոն և այլն, վերլուծել է երեխաների խնամքի և խնամազրկության վերաբերյալ սոցիոլոգիական մեկնաբանությունները՝ Ջ. Տրոնտո, Ջ. Ֆրանկել, Ֆ. Արիես և այլն: Հեղինակը անդրադարձել է նաև հայ հեղինակների՝ Մ. Անտոնյան, Ա. Խաչատրյան, Ս. Իսկանդարյան:

Աշխատանքի գիտական նորույթներից կարելի է առանձնացնել՝

Հիմնավորվել է երեխաների ընտանեկան խնամքից զրկման երևույթի սոցիոլոգիական մեկնաբանության հայեցակարգը,

Մշակվել և տեսականորեն հիմնավորվել է խնամազրկության գործընթացային մեկնաբանությունը' տարբերակելով «խնամազրկություն» հասկացությունը որպես սոցիալական գործընթաց և «ընտանեկան խնամքից զրկված երեխա» հասկացությունը որպես այդ գործընթացի հնարավոր արդյունք և սոցիալական կարգավիճակ,

Առաջարկվել է երեխաների խնամազրկության դասակարգման մոդել,

Գիտական շրջանառության մեջ են ներմուծվել «անտեսանելի ծնող», «դե ֆակտո խնամազրկություն» և «միջանցքում հայտնված երեխաներ» հասկացությունները,

Առաջադրվել և հիմնավորվել է ընտանիքի հարաբերություններում խնամքի իրականացման կառուցվածքային առկայության և գործառութային բացակայության պարադոքսը, մշակվել է խնամող-խնամվող հարաբերությունների գործընթացային դինամիկան նկարագրող մոդել,

Բացահայտվել և տեսականորեն հիմնավորվել է ընտանեկան սոցիալական կապիտալի միջնորդող դերը երեխաների խնամազրկության գործընթացում,

Էմպիրիկ ուսումնասիրությամբ հիմնավորվել են ընտանեկան, համայնքային և երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապիտալի, սոցիալական ռիսկերի կուտակման և երեխաների խնամազրկության հիմքերի, բնույթի ու գործընթացային ուղիների միջև առկա կապերը:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածական մասից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, գրականության ցանկից և ինը հավելվածներից:

Ներածության մեջ հեղինակը հիմնավորել է աշխատանքի արդիականությունը, ձևակերպել է աշխատանքի նպատակն ու խնդիրները, ատենախոսության թեմայի գիտական մշակվածության աստիճանը, ներկայացրել է ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմքերը, նկարագրել է հետազոտության մեթոդները, գիտական նորույթները, տեսական և գիտական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Առաջին գլխում հեղինակը ներկայացրել է մանկության, երեխաների խնամքի և խնամազրկության սոցիոլոգիական մեկնաբանություններy, ինչպես նաև «ծնողության» սոցիալական կառուցակցման հիմնահարցերը:

Երկրորդ գլխում մանրամասն ուսումնասիրվել են սոցիալական կապիտալի հայեցակարգի տեսական հիմքերը, սոցիալական կապիտալի և երեխաների խնամքի փոխկապակցվածությունը, ինչպես նաև սոցիալական կապիտալի տեսության կիրառման հնարավորություններն ու սահմանափակումները երեխաների խնամազրկության ուսումնասիրման համատեքստում:

Երրորդ գլուխը ներկայացնում է հետազոտության մեթոդաբանությունը, ընտանեկան խնամքից զրկման գործընթացի տեսական-հասկացութային վերլուծությունը, խնամազրկության ձևավորման պատճառահետևանքային կապերը, խնամքի թերացումների և խնամազրկության սոցիալական դրսևորումները, ինչպես նաև սոցիալական կապիտալի տարբեր տեսակների և ընտանեկան խնամքից զրկման գործընթացի բնութագրիչների միջև առկա փոխկապակցվածությունները:

Ատենախոսության վերաբերյալ կան հետևյալ **դիտողությունները և հարցադրումները**.

Հեղինակը քննարկում է սոցիալական կապիտալի տարբեր տեսական մոտեցումներ՝ Բուրդյեի, Քոլմանի և Փաթնամի սոցիալական կապիտալի տեսությունները, որոնց համեմատական վերլուծությունը քննարկում է հեղինակը: Ցանկալի կլիներ տեսնել, թե ինչպես է հեղինակը հաղթահարել այս մոտեցումների տեսական հակասությունները հետազոտության մեթոդաբանության մշակման, խնամազրկության դասակարգման և սոցիալական կապիտալի հասկացության օպերացիոնալացման գործընթացում:

Հետաքրքիր է, թե ինչպես է հեղինակը տարբերակում երեխայի և մեծահասակների կողմից ձևավորվող սոցիալական կապիտալը, քանի որ երեխայի սուբյեկտայնությունը քննարկվում է հեղինակի կողմից:

Աշխատությունն ունի ակնհայտ կիրառական նշանակություն երեխաների պաշտպանության և ապաինստիտուցիոնալացման քաղաքականությունների համար: Հեղինակը ներկայացրել է կարևոր առաջարկություններ այդ ուղղությամբ, սակայն ցանկալի կլիներ առավել հստակ տարբերակել կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ քաղաքականության առաջարկությունները, ինչպես նաև նշել դրանց իրականացման պատասխանատու դերակատարներին, ներառյալ պետական, հասարակական և միջազգային կառույցներին:

Խնամազրկության դասակարգման մեջ ինչպե՞ս է տեսնում հեղինակը ժամանակային՝ երեխայի տարիքի (վաղ մանկություն, մանկություն, դեռահասություն, վաղ երիտասարդություն) և խնամազրկության տևողության (օրինակ, ճգնաժամային՝ մինչև 1 ամիս, կարճաժամկետ՝ մինչև 3 ամիս, 3-6 ամիս, միջնաժամկետ, 6-12 ամիս, 12 և ավել ամիսներ, երկարաժամկետ՝ 2 և ավել տարի) չափողականության ներառումը:

Հետաքրքիր է, թե հեղինակը ուսումնասիրել է նորագույն տեխնոլոգիաների դերը երեխայի սոցիալական կապիտալի ձևավորման գործընթացներում:

Նշված դիտողություններն ու հարցադրումները չեն արժեզրկում աշխատանքի գիտական և գործնական արժեքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տաթևիկ Զավենի Կարապետյանի «Ընտանեկան խնամքից զրկված երեխաների սոցիալական կապիտալի սոցիոլոգիական վերլուծություն» թեմայով ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է, որում լուծված են գիտական և կիրառական կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ:

Ատենախոսության հիմնական դրույթները արդիական են և հրատարակված են 6 հոդվածներում՝ հեղինակավոր գիտական տեղական և միջազգային ամսագրերում:

Ատենախոսության սեղմագիրը և տպագրված աշխատանքները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Հաշվի առնելով շարադրվածը՝ գտնում եմ, որ Տաթևիկ Զավենի Կարապետյանի «Ընտանեկան խնամքից զրկված երեխաների սոցիալական կապիտալի սոցիոլոգիական վերլուծություն» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին: Հեղինակը արժանի է ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս,

սոցիոլոգիական գիտությունների թեկնածու

Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի հիմնադիր տնօրեն

Մարինա Կարենի Գալստյան

Օգոստոսի 14, 2026թ.